ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 304
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքը (Ագարակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Կապան համայնքի (Ագարակ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքը (Ագարակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի (Ագարակ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
09-008-0109-0001 կադաստրային ծածկագրով հողամասից 0.5545 հա մակերեսով անտառային նշանակության թփուտները և 09-008-0109-0018, 09-008-0109-0019, 09-008-0109-0020 կադաստրային ծածկագրերով հողամասերից 0.4784 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր	09-008-0109-0001 կադաստրային ծածկագրով հողամասից 0.5545 հա մակերեսով և 09-008-0109-0018, 09-008-0109-0019, 09-008-0109-0020 կադաստրային ծածկագրերով հողամասերից 0.4784 հա մակերեսով հատուկ նշանակության հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից ներկայացված պահանջը (կցվում է):

4. Կապան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ագարակ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի (Ագարակ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ.Առաքելյան

Երևան, «23» «սեպտեմբերի» 2025 թ.